ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Գ. Ա. ԲՐՈՒՏՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ

Տրամաբանության, որպես գիտության, զարդացման արդի փուլին բնորոշ է բաղմահամակարգայնությունը։ Ս. Կլինին՝ մաթեմատիկական տրամաբանության նշանավոր ներկայացուցիչներից մեկը, վճռականորեն հայտարարում է, թե ինչպես Լոբաչևսկու և Բոհյայի ոչ-էվկլիդյան երկրաչափությունների հայտնագործումից հետո պարզ դարձավ, որ մտովի հավասարապես հնարավոր է երկրաչափության տարբեր համակարգերի գոյությունը, այնպես էլ առկա են տարբեր տրամաբանություններ[1]։ Դեռևս ոչ հեռավոր անցյալում տրամաբանների և փիլիսոփաների մոտ իշխում էր Կանտի այն կարծիքը, թե Արիստոտելի ժամանակներից սկսած՝ երկու հազար տարվա ընթացքում տրամաբանությունը ոչ մի առաջընթաց քայլ չի կատարել և ըստ ամենայնի վերջնականապես ավարտուն գիտություն է[2]։ Այսօր, որպես այդ դրության պերճախոս հերքում, որոշ հետազոտություններում տրամաբանական գիտությունների կամ համակարգերի անվանումների թվարկումը երբեմն մի քանի էջ է գրավում[3]։ Այս իրողությունը հասկանալի ցանկություն է առաջացնում դասակարդել տրամաբանական գիտությունները, որի համար նախ և առաջ անհրաժեշտ է դասակարգման հիմքի կամ չափանիշի ճիշտ ընտրությունը։ Դրան, անշուշտ, կօգնի հարցի պատմական քննությունը։

Ստեղծելով տրամաբանությունը որպես գիտություն, Արիստոտելը թերևս անտարբեր է գտնվել վերջինիս անվան նկատմամբ։ Այդ գիտությունն առաջին անգամ ստոիկներն են անվանել «տրամաբանություն», ճիշտ է՝ ավելի լայն սահմաններում ընդգրկելով Արիստոտելի առաջադրած տրամաբանական պրոբլեմատիկան։ Դարեր շարունակ այդ անվանումը բավարարում էր տրամաբանության հետազոտողներին։ Սակայն Կանտը, տարբերակած մոտեցում ցուցաբերելով մտածողության ձևերի հատկություններին, տրամաբանությունը բաժանեց ձևական և տրանսցենդենտալ տրամաբանությունների։ Ձևական (ընդհանուր, տարրական) տրամաբանությունը, Կանտի մեկնաբանմամբ, վերացարկում է իմացության ամեն մի բովանդակությունից, իմացության և վերջինիս օբյեկտի միջև ամեն մի հարաբերությունից և քննարկում է մտածողության ձևերն ընդհանրապես որպես այդպիսիք։ Մինչդեռ տրանսցենդենտալ տրամաբանությունը մտքի ձևերը քննարկելիս հաշվի է առնում ճանաչվող օբյեկտի բնույթը, այդ ձևերի մեջ ամփոփված գիտելիքի ծագումն ու օբյեկտիվ նշանակությունը, այդ ձևերի մատերիան կամ բովանդակությունը[4]։

---

[1] С. Клини, Математическая логика. М., 1973, стр. 17.
[2] И. Кант, Сочинения в шести томах, т. 3, М., 1964, стр. 82.
[3] N. Rescher, Topics in Philosophical Logic, New York, 1968, p. 6—9.
[4] И. Кант. *նշվ. աշխ., էջ 157—159, 216 և այլն։*

Կանտի մտահղացմամբ՝ տրանսցենդենտալ տրամաբանության մեջ է իրականանում իմացության ձևի և բովանդակության սինթեզը։ Պատահական չէ, որ տրանսցենդենտալ տրամաբանությունը Կանտը մեկնաբանում է որպես փիլիսոփայական, ավելի ստույգ՝ իմացաբանական տրամաբանություն։

Ձևական տրամաբանությանը հակադրելով դիալեկտիկական տրամաբանությունը, դրանց միջև եղած էական տարբերությունը Հեգելը տեսնում է այն քանում, որ առաջինը մտքի ձևերն ուսումնասիրելիս վերացարկում է նրանց բովանդակությունից, մտքի որոշակիությունն ուսումնասիրում է նախ և առաջ որպես ձևեր, որոնք տարբերվում են մատերիայից[5]։ Դրանք, Հեգելի բնութագրմամբ, սոսկ բովանդակությանը վերադիր ձևեր են և ոչ թե ինքը բովանդակությունը։ «Իսկ Հեգելը,— գրում է Վ. Ի. Լենինը,— պահանջում է այնպիսի տրամաբանություն, որի մեջ ձևերը լինեն... բովանդակության հետ անիրկելիորեն կապված, կենդանի, ռեալ բովանդակության ձևեր»[6]։ Այդ տրամաբանությունը, Հեգելի մտահղացմամբ, դիալեկտիկական տրամաբանություն է։

Ձևական և տրանսցենդենտալ տրամաբանությունների տարբերակման հիմքը Կանտի մոտ, ձևական (բնական, դպրոցական) և դիալեկտիկական տրամաբանությունների տարբերակման հիմքը Հեգելի մոտ ըստ էության նույնն են։ Տրանսցենդենտալ տրամաբանությունը մի դեպքում, դիալեկտիկական տրամաբանությունը՝ մյուս, տարբերվում են ձևականից նրանով, որ մտքի ձևերը քննարկում են նրանց բովանդակության հետ սերտ կապի մեջ։ Հետևաբար, ինչպես տրանսցենդենտալ, այնպես էլ դիալեկտիկական տրամաբանությունը կարելի է անվանել բովանդակային տրամաբանություն։ Սակայն սխալ կլինի պատկերացնել, թե դիալեկտիկական (ինչպես նաև տրանսցենդենտալ) տրամաբանությունը, հետազոտելով մտքի ձևերը, քննում է դրանց կոնկրետ, էմպիրիկ բովանդակությունը։ Դիալեկտիկական տրամաբանությունը գործ ունի մտքի ձևերի իմացաբանական բովանդակության հետ, որը ցույց է տալիս մեր իմացության պատմական ու տրամաբանական զարգացման կատեգորիալ ուղենիշները, մի կարգի էությունից ավելի խորը կարգի էություններին անցման սահմանագծերը։

Մաթեմատիկական (սիմվոլիկ) տրամաբանության բուռն զարգացումը մեր օրերում հրամայական պահանջ առաջացրեց պարզել մաթեմատիկական տրամաբանության և ձևական տրամաբանության փոխհարաբերությունը։ Ոգեվորվելով մաթեմատիկական (սիմվոլիկ) տրամաբանության հաջողություններով, շատ տրամաբաններ այն համարեցին ձևական տրամաբանության զարգացման ներկա փուլ, իսկ ձևական տրամաբանությունը՝ Արիստոտելից սկսած մինչև մաթեմատիկական տրամաբանության հանդես գալը՝ ավանդական ձևական տրամաբանություն, որը լավագույն դեպքում կարող է ներառվել մաթեմատիկական տրամաբանության համակարգում, որպես նրա ֆրագմենտը՝ Ն. Բորի համապատասխանության սկզբունքի համաձայն։ Մինչդեռ ձևական տրամաբանության և մաթեմատիկական տրամաբանության փոխհարաբերության ճիշտ լուծումը պետք է դիտել տրամաբանության մեջ ձևական և ձևայնացված համակարգերի լույսի տակ։

---

[5] Гегель. Соч., т. V. М., 1937, стр. 13

[6] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 38, էջ 102։

Լեհ տրամաբան Յա. Լուկասևիչն իրավացիորեն նկատում է, որ եթե Արիստոտելի տրամաբանությունը մեծ մասամբ ձևական է, ապա ստոիկների տրամաբանությունը ձևայնացված է։ Այդ խնդիրը մեկնաբանելու նպատակով Յա. Լուկասևիչը նշում է, որ Արիստոտելի տրամաբանությունում սիլլոգիզմի էությունը կախված է ոչ թե բառերից, այլ վերջիններիս նշանակությունից։ Այդ իսկ պատճառով արիստոտելյան տրամաբանությունում սիլլոգիզմը մնում է նույնը այն դեպքում, երբ որոշ արտահայտություններ փոխարինվում են բովանդակությանը համարժեք արտահայտություններով։ Մինչդեռ ձևայնացված տրամաբանությունում միևնույն միտքը միշտ արտահայտվում է նույնակարգ դասավորված բառերի միևնույն և ստույգ շարքի միջոցով[7]։

Ձևական և ձևայնացված տրամաբանություններն ըստ էության տարբերվում են աբստրահման (վերացարկման) բնույթով, մակարդակով և աստիճանով։ Ձևական տրամաբանությունը վերացարկում է հետաքրքրող մտքերի որոշակի բովանդակությունից։ Այս համակարգում կոնկրետ տերմինները փոխարինվում են տառային նշանակումներով, հանդես գալիս որպես փոփոխականներ։ Միևնույն ժամանակ տրամաբանական հաստատունները դիտվում են իրենց բովանդակության տեսակետից՝ ըստ նշանակության համարժեք դարձվածքները (ինչպես և բառերը) փոխարինում են միմյանց։ Դա հիմք է տալիս նշելու, որ ձևական տրամաբանությունում վերացարկում ենք մտքի ձևերի կոնկրետ և մասնավոր բովանդակությունից, բայց ոչ ամեն մի բովանդակությունից, ոչ թե բովանդակությունից ընդհանրապես։

Ի տարբերություն ձևական տրամաբանության, ձևայնացված տրամաբանությունում վերացարկում ենք ամեն մի բովանդակությունից, քննում մաքուր, արտաքին ձևերը, որպես այդպիսիք։ Նման մոտեցումը բխում է ձևայնացման էությունից[8]։

Մաթեմատիկական (սիմվոլիկ) և ձևական (ավանդական) տրամաբանության փոխհարաբերությունը քննելիս պետք է հաշվի առնել հետևյալ գործոնները. ա) մաթեմատիկական տրամաբանության շրջանակներում գոյություն ունե՞ն արդյոք ոչ թե ձևայնացված, այլ ձևական համակարգեր։ Հարցի դրական պատասխանի դեպքում այդ համակարգերը պետք է համարվեն ձևական տրամաբանության զարգացման ներկա փուլ։ Այդ համակարգերի և ավանդական ձևական տրամաբանության փոխհարաբերությունը պետք է լուծվի համապատասխանության սկզբունքի մեթոդաբանական կիրառմամբ։ բ) Այլ հարթության վրա պետք է լուծվի մաթեմատիկական տրամաբանության ձևայնացված համակարգերի և ձևական տրամաբանության փոխհարաբերությունը։

Իսկ մի՞թե հնարավոր չէ մտքի ձևերի ամբողջովին ձևայնացումը։ Չէ՞ որ մաթեմատիկական տրամաբանության՝ որպես ձևայնացված տրամաբանության հաջողություններն ակնբախ են։ Հ. Ռեյխենբախի կարծիքով, մաթեմատիկական (սիմվոլիկ) տրամաբանության հսկայական առավելությունն ավանդական տրամաբանության նկատմամբ այն է, որ նոր տրամաբանությունն ի վիճակի է վերլուծել մտային կառույցներ, որոնք հին տրամաբանությունը

---

[7] Я. Лукасевич. Аристотелевская силлогистика с точки зрения современной формальной логики. М., 1959. стр. 51—55.

[8] С. Клини. Введение в метаматематику. М., 1957. стр. 59.

երբևք չէր հասկանում, կարող է լուծել պրոբլեմներ, որոնց գոյության մասին հին տրամաբանությունը երբեք չգիտեր»։

Առաջադրված հարցին պատասխանելու համար պետք է նկատի ունենալ ձևայնացման հնարավորության սուբյեկտիվ և օբյեկտիվ կողմերը։ Առաջինը հանգում է այն բանին, որ այսօրվա ձևայնացման ոչ բացարձակ հնարավորությունները բացատրվում են ուսումնասիրվող օբյեկտի և ձևայնացման մասին մեր գիտելիքների սահմանափակությամբ։ Իսկ դա նշանակում է, թե այն ինչ ձևայնացված չէ այսօր, կարող է ձևայնացվել վաղվա գիտության միջոցներով։

Սակայն, եթե ձևայնացման պրոբլեմը սահմանափակվեր միայն նշված նկատառումով, մենք պետք է հաստատեինք տրամաբանության բնագավառում սկզբունքորեն լրիվ ձևայնացման հնարավորությունը։ Մինչդեռ ձևայնացումը ունի նաև օբյեկտիվ սահմանափակություններ։ Ակադեմիկոս Ի. Տամը նշում է, որ միկրոաշխարհի օրենքների ստատիստիկական բնույթը պայմանավորված է ոչ թե միկրոաշխարհի մեր իմացության սահմանափակությամբ, ինչպես մի ժամանակ ենթադրում էին որոշ հետազոտողներ, այլ առարկաների բուն բնույթով։ Սա միայն մասնավոր դեպք չէ։ Կ. Գյոդելի հետազոտություններից[10] բխում է իմացաբանական այն դրույթը, որ հնարավոր չէ ամբողջությամբ ձևայնացնել մտածողությունը, բանականությունը, որ գոյություն ունեն խնդիրներ, որոնք լուծվում են ոչ թե ձևական, այլ ոչ-ձևական մեթոդներով[11]։

Պատահական չէ, որ այժմ որոշ փիլիսոփաներ ու տրամաբաններ գտնում են, որ մաթեմատիկական (սիմվոլիկ) տրամաբանությունը չի կարող ներառել տրամաբանական կշռադատության ողջ տիրույթը և տրամաբանությունը բաժանում են ձևական (ըստ էության նկատի ունենալով ձևայնացված տրամաբանությունը) և փիլիսոփայական տրամաբանությունների[12]։

Այսպիսով, հիմք ընդունելով մտքի բովանդակությունից վերացարկման բնույթն ու մակարդակները, կարելի է առանձնացնել երեք տիպի տրամաբանական գիտություններ՝ բովանդակային, ձևական և ձևայնացված։ Չնայած թե՛ բովանդակային, թե՛ ձևական և թե՛ ձևայնացված տրամաբանությունների հետազոտության օբյեկտը տրամաբանական կշռադատությունն է, սակայն դրանցից յուրաքանչյուրն ունի իր առարկան։ Վերջինս որոշվում է այն բանով, թե ինչ հատույթով է դիտվում կշռադատությունը։ Ձևական տրամաբանության կողմից ուսումնասիրվող միևնույն տիպի՝ ընդհանուր-հաստատական դատողությունները դիալեկտիկական (որպես բովանդակային) տրամաբանության կողմից որոշակի պայմանների դեպքում կարող են քննարկվել որպես եզակիության, հատկականության և համընդհանրության դատողություններ, երբ ոչ թե վերանում ենք այդ դատողությունների կոնկրետ և մաս-

[9] H. Reichenbach, Elements of Symbolic Logic, The Free Press, 1947, p. 3.

[10] K. Gödel, On Formally Undecidable Propositions of *Principia Mathematica* and Related Sistems. In: Frege and Gödel. Two Fundamental Texts in Mathematical Logic. Edited by J. van Heijenoort, Harvard University Press, 1970.

[11] E. Nagel and J. R. Newman, Gödel's Proof, New York University Press, 1964, p. 101.

[12] Philosophical Logic, ed. by P. F. Strawson, Oxford University Press, 1967, p. 1—2: N. Rescher. Topics in Philosophical Logic, p. 1—5.

նավոր բովանդակություններից, այլ ուսումնասիրում դատողության ձևը՝ նրա իմացաբանական բովանդակությամբ պայմանավորված։ Միևնույն ժամանակ վերացարկելով մտքի ձևերի ամեն մի բովանդակությունից, բացահայտում ենք մտքի այնպիսի հատկություններ, որոնք դուրս են մնում ինչպես բովանդակային, այնպես էլ ձևական տրամաբանության տեսադաշտից։ Բովանդակային, ձևական և ձևայնացված տրամաբանության գիտական համակարգերից յուրաքանչյուրն ունի իր առարկան և, հետևաբար, դրանք ոչ թե իբր ժխտում են, այլ գտնվում են համագոյության հարաբերության մեջ։

Վերացարկման մակարդակները թեև կարևորագույն, բայց միակ առանձնահատկությունները չեն, որոնք պայմանավորում են տրամաբանության տարբեր գիտությունների գոյությունը։ Խիստ կարևոր է այն հարցը, թե ի՞նչ բնույթի լեզվի հենքի վրա է ստեղծված այս կամ այն տրամաբանությունը որպես գիտություն, այլ կերպ ասած՝ տրամաբանության գիտության բնույթը պարզելու համար պետք է քննել նաև տրամաբանության լեզուն։

Բովանդակային տրամաբանության լեզուն բնական, խոսակցական լեզուն է։ Իհարկե, այս լեզվի կիրառման ցանկացած ոլորտներում կարող ենք դիմել արհեստական լեզվի նշաններին, սակայն դա հարցի էությունը չի փոխում։

Ձևական տրամաբանության համակարգերում լայն չափերով կիրառվում է սիմվոլիկան։ Այս տրամաբանությունում դիմում ենք բառերի և դարձվածքների իմաստին, նշանակությանը, որպեսզի համարժեք բառերը (դարձվածքները) փոխարինեն միմյանց։ Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ ձևական տրամաբանության լեզուն ևս կենդանի, խոսակցական, առօրեական է։ Ձևական, ինչպես և բովանդակային տրամաբանությունը, բնական լեզվի հենքի վրա ստեղծված տրամաբանությունն է։ Եվ եթե ձևական տրամաբանությունում սիմվոլները շատ ավելի մեծ չափով են տեղ գտնում, քան բովանդակային տրամաբանությունում, ապա դա վկայում է, որ ձևական և բովանդակային տրամաբանությունները գտնվում են մտքի բովանդակությունից վերացարկման տարբեր մակարդակների վրա։

Ինչ վերաբերում է ձևայնացված տրամաբանության լեզվին, ապա այն իր բնույթով միանգամայն այլ է։ Ձևայնացված տրամաբանության լեզուն սիմվոլիկ, արհեստական լեզու է։ Այս լեզվում նշանները չունեն որևէ իմաստ, դրանք օգտագործվում են որպես այդպիսիք, հանգամանք, որը դարձյալ ցույց է տալիս ձևայնացված տրամաբանության վերացարկման բնույթը, այն, որ այդ տրամաբանությունը վերացարկման բարձրագույն մակարդակն է խորհրդանշում։

Այժմ քննենք ձևական տրամաբանությունը ձևայնացված տրամաբանությամբ փոխարինելու հարցը, դրանց լեզվական հենքի բնույթի տեսանկյունից։ Ինչպես նշվեց, ձևական տրամաբանության հենքը խոսակցական լեզուն է։ Պատահական չէ, որ երբեմն այն անվանվում է «առօրյա լեզվի տրամաբանություն»[13]։ Եթե մտքի ձևերի ձևայնացումը չունենար անգամ ոչ մի օբյեկտիվ սահմանափակում, ապա ձևական տրամաբանությունը ձևայնացված տրամաբանությամբ փոխարինելու դեպքում պետք է հիմնովին վերանայեինք նաև տրամաբանության լեզվական հենքը։ Այդ դեպքում պետք է հրաժարվեինք

[13] R. Purtill, Logic for Philosophers, Harper and Row, Publishers, 1971.

բնական լեզվի ծառայություններից և դիմեինք միայն արհեստական լեզվին, կամ, ինչպես Ա. Չյորչն է անվանում, ձևայնացված լեզվին[14]։

Եթե անգամ այդ հնարավորությունն ունենայինք, ապա արժե՞ արդյոք դիմել դրա իրականացմանը։ Պատասխանը պետք է լինի բացասական։ Նախ այն պատճառով, որ մտքի մասնավոր և կոնկրետ բովանդակությունից վերացարկելը հնարավորություն է ընձեռում բացահայտելու կշռադատության այնպիսի հատկություններ, որոնք հետազոտողի տեսադաշտից դուրս են մնում, երբ վերացարկման պրոցեսը շարունակում ենք և հասցնում ձևայնացման մակարդակին։ «Տրամաբանության լեզուն» դիրքը Հ. Ֆրեյդենտալը ավարտում է շատ հետաքրքիր եզրակացությամբ. «Այս ամենի բարոյախոսությունն այսպիսին է. «բոլոր» բառային դարձվածքը ձևայնացնելով $\bigwedge$ քվանտորի միջոցով, մենք փորձում ենք անսահմանը ներառել վերջավորի մեջ։ Սակայն այդ գնպքում մենք կարող ենք հույս դնել լոկ մասնակի հաջողության վրա»[15]։

Այնուհետև, ձևական տրամաբանությունը ձևայնացված տրամաբանությամբ փոխարինելն ըստ էության նշանակում է ինքնակամ զրկվել «առօրյա» լեզվի տրամաբանությունից։ Օգտագործելով Ֆրեգեյի համեմատություններից մեկը, կարելի է ասել, թե ինչպես մանրադիտակն ինչքան էլ ուժեղ օպտիկական գործիք լինի, չի կարող կատարել աչքի բոլոր ֆունկցիաները, այնպես էլ ձևայնացված տրամաբանությունը լուծելով այն խնդիրները, որոնց առջև անզոր է ձևական տրամաբանությունը, այնուամենայնիվ չի կարող կատարել այն, ինչ կատարում է վերջինս որոշակի բնագավառներում։

Այսպիսով, հիմք ընդունելով մտքի բովանդակությունից վերացարկման բնույթն ու մակարդակը, մենք գործ ենք ունենում բովանդակային (1), ձևական (2) և ձևայնացված (3) տրամաբանությունների հետ։ (1) խմբի մեջ կարող են ներառվել Կանտի տրանսցենդենտալ տրամաբանությունը, Հեգելի դիալեկտիկական տրամաբանությունը, մարքսիստական դիալեկտիկական տրամաբանությունը, փիլիսոփայական տրամաբանությունը, «փիլիսոփայական փաստարկումը»[16], որպես տրամաբանություն և այլն։ (2) խմբի մեջ ներգրավվում են արիստոտելյան տրամաբանությունը, ավանդական ձևական տրամաբանությունը, մաթեմատիկական (սիմվոլիկ) տրամաբանության այն համակարգերը, որտեղ այս կամ այն չափով գործ ունենք իմաստային մեկնաբանության հետ։ (3) խումբը կազմում են այն տրամաբանությունները, որոնք հանդես են գալիս որպես գիտության լեզուների շարահյուսական համակարգեր։

Հիմք ընդունելով «տրամաբանության լեզուն», կարելի է ստանալ երկու հիմնական դաս՝ բնական լեզվի տրամաբանություն (I) և արհեստական լեզվի տրամաբանություն (II)։ (1) և (2) խմբերում թվարկված տրամաբանական համակարգերը կազմում են (I) դասը, իսկ (3) խմբի տրամաբանական համակարգերը՝ (II) դասը։

Տրամաբանական գիտությունների բաժանումը (1), (2) և (3) խմբերի, ինչպես նաև (I) և (II) դասերի, կատարված է համաժամանակության սկզբ-

---

[14] А. Черч, Введение в математическую логику. т. I, М., 1960. стр. 16—17.

[15] H. Freudenthal, The Language of Logic, Elsevier, 1966, p. 101.

[16] Ch. Perelman and L. Olbrechts, Tyteca, La Nouvell Rhetorique: Traite de l'Argumentation, Paris, 1958; „Simposium sobre la argumentacion filosofica", Mexico, 1963.

բունքով։ (1), (2) և (3) խմբերի, ինչպես նաև (I) և (II) դասերի փոխհարաբերությունը քննարկելիս կարելի է դրանց նկատմամբ կիրառել լրացչության սկզբունքն իր մեթոդաբանական նշանակությամբ և խնդրո առարկայի առանձնահատկությունների հաշվառմամբ[17], *այլ ոչ թե համապատասխանության սկզբունքը, ինչպես ենթադրում են որոշ տրամաբաններ։*

Ինչ վերաբերում է (1), (2) և (3) խմբերում ներառված տրամաբանական գիտություններին կամ համակարգերին, ապա դրանք ամբողջությամբ կամ մասամբ կարող են դասակարգվել պատմական հաջորդականությամբ և բացառված չէ դրանց կամ դրանցից մի քանիսի նկատմամբ համապատասխանության սկզբունքի կիրառումը դարձյալ վերջինիս մեթոդաբանական առումով։

К ВОПРОСУ О КРИТЕРИЯХ ОПРЕДЕЛЕНИЯ СТАТУСА ЛОГИЧЕСКИХ НАУК

Г. А. БРУТЯН
Член-корреспондент АН Арм. ССР

Резюме

Характерная особенность современной стадии развития логики как науки — многосистемность, или, по терминологии Клини, равновозможность различных логик—обусловила необходимость классификации логических наук.

В качестве основного критерия определения статуса логических наук можно указать на уровни абстрагирования от объекта, исследуемого логическими науками. Фактически, этим критерием руководствовался Кант, отличая трансцендентальную логику от логики формальной (общей), Гегель, противопоставляя диалектическую логику логике формальной, Ян Лукасевич, раскрывая специфику формальной, аристотелевской логики, с одной стороны, и формализованной логики (в том числе, в определенном смысле, логики стоиков)—с другой и т. д.

Уровни абстрагирования от объекта логики показывают, что предметы изучения содержательной, формальной и формализованной логик различны, и к ним следует применять не принцип соответствия, как это полагают некоторые логики, а принцип дополнительности — с определенной модификацией и на уровне его методологического обобщения.

Из применения критерия уровней абстрагирования от объекта логики имплицируется необходимость отличения логических наук, построенных на принципиально различных языковых основах,— на базисе естественного языка и на базисе искусственного языка. К первой группе относятся системы содержательной и формальной логики, ко второй — формализованной.

Разновидности же содержательной, формальной и формализованной логик, или же логики естественного языка и логики искусственного языка (при ином ракурсе рассмотрения) могут быть классифицированы в плане диахронии.

[17] «Философские науки», 1974, № 4, стр. 31—38.